ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2052-Ա «18» ապրիլի 2026 թ.

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՓԱՐԻԶ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա. Բեգոյանի Ն/24058-26 գրությունը, Իլ դը Ֆրանս շրջանի միջազգային հարաբերությունների վարչության պետ Լորան Պանդոլֆինիի հրավերը՝ փորձի փոխանակման շրջանակներում վերամշակվող թափոնների հավաքագրման և կառավարման, ինչպես նաև քաղաքային կանաչապատման նոր տեխնոլոգիաների ուսումնասիրման նպատակով.

1.«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանին՝ 2026 թվականի մայիսի 3-ից 9-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության մայրաքաղաք Փարիզ:

2.Ընդունել ի գիտության, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ օրապահիկի, որն իրականացվում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի բացակայության ընթացքում՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել ՀՈԱԿ-ի ֆինանսական գծով տնօրենի տեղակալ Արթուր Սարգսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ